1897 ՆՈՅԵՄԲԵՐԻ 12 (24) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

№. 131 — ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ — №. 131

1897 ՆՈՅԵՄԲԵՐԻ 12 (24) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը:
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.:
Առանձին համարը 7 կոպէկ:
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»:
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Арджаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 3 կոպէկ:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԲԱՑՈՒԱԾ Է 1898 ԹՈՒԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
(ՏԱՍՆԵՒԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդամիրեանի) և «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 ՌՈՒԲԼԻ

Օտարաքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція „Арджаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang"

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով:

1898-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԸ

Այն անձինք և հաստատութիւնները, որոնք ԱՅԺՄԷՆ ԻՍԿ կը ստորագրուին 1898 թուի „ԱՐՁԱԳԱՆՔԻՆ", կը ստանան համարները ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԵԼՈՒ ՕՐԻՑ՝ վճարելով ընդամենը տասը ռուբլի:

ՀԱՅԿԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ
ԱՐՏԻՍՏ. ԹԱՏՐՈՆՈՒՄ

Չորեքշաբթի, նոյեմբերի 12-ին 1897 թուի
Հայ դերասանական ընկերութիւնը
Մասնակցութեամբ օր. օր. Խիթարեանի, Աբուչեանի և պ. Տէր-Դաւթեանի
կը ներկայացնէ

I

ԱՅՍ ԷԼ ՔԵԶ ԱՊԱՀԱՐԶԱՆ
(Les surprises du divorce)
Կօմ. 3 գործ., հեղին. Մօրօս, թարգմ. Ա. Թ.:

II

ՄԿՆԻԿ
(La souricière)
Վօդ. 1 գործ., Արգամ Ռօզայի, թ. Ա. Վրոյր:

ՍԿԻԶԲԸ Է ԺԱՄԸ 8 ԺԱՄԻՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ
Տոմսակները վաճառվում են թատրոնի կասայում:
Տեղերի գինը սովորականից էժանացրած

ԹԻՖԼԻԶԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Անտրեպրիզ Վ. Լ. ՖՕՐԿԱՏՏԻԻ

Նոյեմբերի 14 ին Նորին Կայսերական Մեծութեան ՄԱՐԻԱ ՖԵՕԴՈՐՈՎՆԱՅԻ ծննդեան օրուայ առիթով կը տրուին երկու ներկայացում:

Չորեքշաբթի, նոյեմբերի 12-ին
Օպերային արտիստների ընկերութիւնը կը ներկայացնէ

ՊԻԿՈՎԱՅԱ ԴԱՄԱ

Մասնակցողներ.— Օր. օր. Պապայեան, Տիմանինա, Կարամզինա-Քուլովսկայա, Կուրենինա-Դինկլեյժա, պ. պ. Արցիմովիչ, Վինօգրադով, Կամիօնսկի, Բուլաւով, Դեցիմիչ և այլք:
Երաժշտապետ Ի. Գ. ՊԱԳԱՆԻ.
Բալէտը կը դնէ տիկ. ՋՕՎԱՍՍԻ
Օրիորդ Լինչեվսկու մասնակցութեամբ, Ռէժիսոր Ի. Ե. ՓԻՐՈՒԶՈՎ.

ՍԿԻԶԲԸ Է 8 ԺԱՄԻՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ

ԱԶԴ.— Վաղը ի նպաստ Ս. Է. Դլադումովի մասնակցութեամբ Լիդիա Դրոզի «ՋԻՕԿՕՆԴԱ»: Մասնակցում են՝ օր. օր. Լիդիա Դրոզ, Կարամզինա-Քուլովսկայա, Կուրենինա-Դինկլեյժա, պ.պ. Կօկինի, Վինօգրադով, Դլադումով, Բելսկի և այլք:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Գաղթականներին խնամող յանձնաժողովը: «Եղբայրական օգնութեան» գրքի հասոյթի գործադրութիւնը: Կովկասեան գիւղացիներին հողաբաժիններ: Թիֆլիզի բազմարուեստեան դպրոցը: Լուսաւոր-առաք. եկեղեց. գրքերը: Ֆելիքս Ֆորի պատասխանը Թիֆլիզի քաղաքագլխին: Տէր-Դաւթեանի յոբելեանը: Հայ դեր. ընկերութեան 2-րդ ներկայացումը: Տնայնագործութեան արհեստանոց: Գ. Աղեքսանդրեանի գործարանը: Վլադիկավկազի երկաթուղին: Նամակներ խմբագրութեան: Նորաւարտ հայ բժիշկներ: Նամակ Պետերբուրգից: Նամակ Բեռլինից: Կովկասեան եկեղեցոյ երեցփոխանը: Թոքի հիւանդութեան և բորոտների բուժարան: Դատաւոր մի էր, որ յԱստուծոյ ոչ երկնչէր...: Միքայէլեան տեխ. դպրոցի հանդէսը: Դպրոց. խնայողգրամարկղեր: Կովկ. ռազմավիրական ճանապարհը: Թիֆլիզի սանիտարական օգնական: Ղազախի աւազակները: Նամակ Ախալցխայից: Չալթըր գիւղ: Հոգեհանգիստ Երեմիա եպիսկոպոսի: Երեմիա արքեպիսկ. գիւղի անդամահատութիւն: Պասկեւիչ սեկտի պրոկուրորից՝ Երեմիա եպ. համար: Հայկական ներկայացումներ Բաքւում: Արմաւիրի գինը Թիֆլիզում: Թիֆլիզի կենսական պիտոյքները: Մի նոր պարսկական լրագիր:
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՖԵԼԻԵՏՕՆ.— Երկու խօսք հայ ժողովրդի անգիր բանաստեղծութեան մասին:
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նոյեմբերի 7-ին, Թիֆլիզի քաղաքային վարչութեան առաջարկութեամբ, քաղաքային առողջապահական պ. տեսուչն ուղարկեց ի կարգադրութիւն հայ գաղթականների խնամող յանձնաժողովի, զանազան ճերմակեղէններ 260 կտոր, նոյնպէս 70 կտոր զանազան տաբատներ, բաճկներ, թասեր, լապտերներ և այլն: Այդ առարկաների մի մասը յատկացուած է այն գաղթականներին, որոնք ապրում են Թանգօյեան հիւանդանոցում.

* *

«Եղբայրական օգնութիւն» (Братская Помощь) գրքի խմբագրութիւնը յայտարարել է «Ռուս. Վեդ.» թերթի միջոցաւ, որ այդ գրքի մինչև այժմ եղած հասոյթից ուղարկուած է Կ. Պոլսի ռուսական դեսպանին ի կարգադրութիւն՝ 13.000 ֆր. (մօտ 4,860 ռ. կուրսով): Այդ փողի գրեթէ ամբողջ գումարը ռուսաց դեսպանը տուել է Կ. Պոլսի հայոց պատրիարքին՝ բաշխելու համար տառապեալ հայերին.

* *

Մեր երկրի պետական գիւղացիների հող չունենալը ծանր աղքատութիւն է ստեղծում գիւղական հասարակութեան և ամբողջ երկրի տնտեսական կեանքի վրայ, ուստի ուրախութեամբ կարդում ենք մայրաքաղաքի թերթերում, թէ առաջիկայ յունվարին երկրագործական և պետական կալուածների նախարարութեան մէջ պիտի քննուի Կովկասեան պետական գիւղացիներին հողաբաժիններ (նադել) տալու հարցը:

* *

Թիֆլիզի իրաւատուներից ընտրուած յանձնաժողովը, որ պէտք է խորհրդակցէ և միջոցներ գտնէ Թիֆլիզում բազմարուեստեան դպրոց բանալու համար, բաւական դանդաղ է առաջ տանում իր գործը: Նոյեմբերի 8-ին կայացած նիստի մէջ, յանձնաժողովը լսեց այդ առթիւ կազմած զեկուցումը և վճռեց տպագրել նրան, մի շաբաթից յետոյ կէկին քննել և ապա մատուցանել տեղական բարձր իշխանութեան:

* *

Ներքին գործոց նախարարութեան բաժանմունքը, որ ղեկավարում է օտար դաւանութեան եկեղեցիների վերաբերեալ հոգևոր գործերը, կարգադրել է որ Լուսաւորչական-առաքելական եկեղեցական բոլոր գրքերը պարտաւորիչ կերպով կազմուին ռուսերէն լեզուով:

* *

Թիֆլիզի քաղաքագլխի պ. պաշտօնակատարը ի պատասխան այն ողջոյնի հեռագրին, որ ուղարկել էր Թիֆլիզ քաղաքը ֆրանսիական հանրապետութեան նախագահ պ. Ֆելիքս Ֆորին, նրա Ռուսիա գալու առթիւ, նոյեմբերի 10 ին, Փարիզից ստացաւ հետևեալ նամակը, որ գրուած է հոկտեմբ. 29-ից.

„Monsieur le maire, M. le president de le République a été bien vivement touché des témoignages si nombreux de sympathie et d'amitié pour la France, qui lui ont été adressés de tous les points de la Russie à l'occasion de son voyage.

„Il a été particulièrement sensible à votre telegramme et m'a chargé de vous en remercier.

Veuillez agréer, Monsieur le maire, les assurances de ma haute considération.

Le chef du secretariat particulier du président de la République *H. Blondel*".

Նամակի թարգմանութիւնը հետևեալն է.

«Պարոն քաղաքագլուխ: Հանրապետութեան պ. նախագահը շատ զգացուած է համակրանաց և բարեկամութեան բազմաթիւ արտայայտութիւններով, որոնք ուղարկուեցին նրան Ռուսիայի բոլոր ծայրերից, նրա ճանապարհորդութեան առթիւ:

«Նա առանձնապէս զգացուած է ձեր հեռագրով և յանձնեց ինձ արտայայտել ձեզ այդ մասին իւր շնորհակալութիւնը:

«Բարեհաճեցէք ընդունել, պ. քաղաքագլուխ, իմ անկեղծ յարգանացս հաւատիքը:

Հանրապետութեան նախագահի անձնական դիւանի կառավարիչ Հ. Բլոնդել»

* *

Կիւրակէ, նոյեմբերի 9 ին, «Կովկաս» հիւրանոցում կայացաւ մեր տաղանդաւոր կոմիկ պ. Գ. Տէր Դաւթեանի համակրողների ժողովը, որոնք խորհրդակցում էին արտիստի 25 ամեայ գործունէութեան յոբելեանը կատարելու մասին: Ժողովին ներկայ եղողները իրենց միջից ընտրեցին 10 հոգի, որոնք պիտի բանակցեն մասնաւոր անձանց, թատրոնական ընկերութեան և այլ հաստատութիւնների հետ, հայ բազմաշնորհ դերասանի յոբելեանի առթիւ.

* *

Այսօր, չորեքշաբթի, վրաց ազնուականաց թատրոնում կը կայանայ հայ դերասանական ընկերութեան երկրորդ ներկայացումը թատերասէրների մասնակցութեամբ: Այս անգամուան ներկայացման համար խումբն ընտրել է երկու յայտնի զուարճալի պիէսներ «Այս քեզ ապահարզան» կոմեդիան և «Մկնիկ» վօդեվիլը:

Մեզ հաղորդում են որ ընկերութիւնը առաջիկայ ներկայացումների համար, ի միջի այլոց ընտրել է և նշանաւոր ֆրանսիական դրամատուրգ Էմիլ Օժիէի «Երկու գերդաստան» (Les Fourchambeault) նշանաւոր կոմեդիան, որ Comédie Française-ի ռեպերտուարի պիէսներից է, նոյնպէս և Պօլ-Էրվիէյի «Ճիրաններ» պիէսը, որ փոխադրուած է և յարմարեցրած հայկական բեմին: Շատ ուրախ ենք, որ հայկական բեմի ռեպերտուարը հարստանում է նոր նշանաւոր երկերով:

* *

Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը դիմել է Թիֆլիզի քաղաքային վարչութեան, խնդրելով օժանդակել իրան դրամական օգնութեամբ, որպէսզի ընկերութիւնը կարողանայ Թիֆլիզում հիմնել տնայնագործական արհեստանոց:

Մենք արդէն քանիցս կրկնել ենք, որ տնայնագործական արհեստանոցի Թիֆլիզում բացուիլը խորհուրդ չունի, այլ պէտք է բանալ այն գաւառներում, ուր զարգացած են տնային արհեստները:

* *

«Ռուսսկ. Վեդ.» հաղորդում է թէ Վլադիկավկազի երկաթուղու վարչութիւնն ի նկատի ունենալով Կովկասեան լեռնային արդիւնաբերութեան զարգացումը, մտադիր է մօտ օրերս ժամանակ գծեր անցկացնել դէպի Սև ծովի ափի զանազան նաւահանգիստները:

* *

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Պ. խմբագիր.

«Մշակ» լրագրի յայտարարութեան բաժնում տպուած կայ մի վրդովեցուցիչ ազդ: Ահա ամբողջը: «Թիֆլիզի միջնակարգ դպրոցներից (?) մէկի վերջին դասարանի օգնութեան կարօտ մի աշակերտ խնդրում է ազգերին հետևեալը.— Ես գտնվում եմ շատ նեղ վիճակի մէջ. ունիմ 25 ռուբլի պարտք, որ հարկաւոր է անյապաղ վճարել, հակառակ դէպքում անկարող եմ վերջացնել դըրոցական դասընթացքը: Օգնութեան ձեռք չունենալով՝ դիմում եմ հասարակութեան կարող և բարեսէր անձանց՝ խնդրելով որ նրանցից մէկը բարի գտնուի ինձ ազատել այդ դրութիւնից. դպրոցից (երեկ նորա դըրոցն է այդ) դուրս գալուց՝ մի երկու ամիս յետոյ կը վերադարձնեմ ինձ տըրուած այդ գումարը»:

Վրդովեցուցիչ է այն հանգամանքը, որ աւարտելու մօտ մի երիտասարդ 25 ռուբլու համար ստիպուած է թողնել ուսումը, որովհետև ոչ ոք չկայ նրան օգնող: Հետաքրքիր է իմանալ թէ ինչ է անում այդ դպրոցի վարչութիւնը, որ միջոցներ ունի և իրաւունք՝ օգնելու կարօտեալ սաներին և որը չի հետաքրքրվում նրա դրութիւնով ու թողնում է նրան այդքան խղճալի մի յայտարարութիւն տալու լրագրների մէջ: Եւ վերջապէս ինչպէս է Բարեգործական ընկերութիւնը, երբ մի այդքան չնչին օգնութիւն էլ չէ կարող անել յուսահատուած աշակերտի:

Անդամ Կովկ. Հ. Բարեգ. Ընկերութեան:
Նոյեմբերի 11.

II

Պ. Խմբագիր.

Թիֆլիզում վերջանալու մօտ է իմ պօէմի տպագրութիւնը «Ռոկոս և Մանտարա» հեռու Հիւսիս-արևմտեան Սիբիրի կեանքից: Խնդրում եմ ձեզ յանձն առնել վաճառելու այդ գրքից 25 օրինակ այն պայմանով, որ վաճառումից գոյացած գումարը յատկացնուի օգնելու այն հայ ընտանիքներին, որոնք փնտռում են բրիտանէութեան՝ կրաւուելի հետ ունեցած ընդհարումից:

Ընդունեցէք և այլն

Նիկոլայ Ֆոմիչ Բօրիսովսկի, հեղինակ «Պատկերներ Սիբիրի կեանքից» և «Հնդկական և Չինական նկարագրութիւններ»:

Նոյեմբեր. 11 1897 թ.
Թիֆլիզ.

Ծ. Խ. Երբ կստանանք յիշեալ գրքերը, կը տնօրինենք հեղինակի ցանկացածի պէս:

III

Պ. Խմբագիր.

Խնդրում եմ պատուական «Արձագանքի» մօտակայ համարներից մէկում տեղ տալ այս երկտողին:

Մի քանի տարի է ահա, որ կարդում եմ «Մշակ» լրագրի համարները և գլուխ եմ կոտրում, թէ ինչու է արդեօք հրատարակվում «Մշակը», ինչ է նրա նպատակը, ինչ է նա քարոզում: Ցաւօք սրտի պիտի խոստովանեմ, որ ոչ մի եզրակացութեան չեկայ, որովհետև նրա ամեն մի համարը մէկը միւսին հակասող յօդուածներով լիքն է լինում. և եթէ «Մշակի» մէջ այսօր մի ազգային գործիչ, մի հոգևորական և վերջապէս մի այլ ումն փառաբանվում է՝ վաղը նոյն «Մշակում» նրա հակառակն ենք կարդում: Այնպիսի մի քաոս, որ երազում տեսնել անկարելի է:

«Մշակի» այս տարուայ № 129 ի ներքին լուրերի մէջ կարդացի հետևեալը.

«Մենք յայտնեցինք մեր ուրախութիւնը, որ Թիֆլիզում մնացած մի քանի հայ դերասանները մտադիր են ներկայացումներ տալ՝ գլխաւորապէս սիրողների մասնակցութեամբ: Այժմ պէտք է յայտնենք մեր ցաւակցութիւնը, որ սիրողները, ինչպէս այդ երևում է տեղական լրագիրների հաղորդած տեղեկութիւններից, ջերմ մասնակցութիւն (!?) չեն ընդունում, և մեր դերասանական խմբի մնացորդները վստահութիւն ունեն կարծելու, որ միմիայն իրանց ուժերով կարող են գործ կատարել: Ճշմարիտ է, Թիֆլիզում կան մի երկու շնորհալի դերասաններ, բայց այդ խօսք չէ նշանակում, որ հասարակութիւնը կը համաձայնվի թատրոն գնալ տեսնելու այնպիսի խաղացողների, որոնք վաղուց պէտք է հեռացած լինէին հայոց բեմից: Շատ ցաւում ենք (?) որ սիրողների բացակայութիւնը մի կողմից, իսկ միւս կողմից էլ՝ մի քանի այնպիսի կողմնակի անձանց միջամտութիւնը թատրոնական գործում, որոնք ոչ մի կերպ չեն վայելում հասարակութեան վստահութիւնը,—գուշակում է կատարեալ անյաջողութիւն: Շատ ափսոս»:

Արդեօք այս գրածը ապացոյց չէ իմ ասածին, որ «Մշակը» ինքն իրան հակասում է և իրաւունք է տալիս ինձ ժպտալ նրանց— ինքնակոչ լուսաւորիչների վրայ:

Ինչու պարզ չէք գրում. «հասարակութիւն, ձեզ հետ ենք, թատրոն չգնաք». ուրիշ տեսակ բացատրել չեմ կարող «բայց այդ խօսք չէ նշանակում, որ հասարակութիւնը կը համաձայնուի թատրոն գնալ» խօսքերը: Ինչ եղկելիութիւն է վերջապէս «շատ ցաւում ենք» խօսքերը: Ինչու համար էք ցաւում. Նրա համար որ դերասանները չպէտք է յաջողութիւն ունենան և մի երկու երեք ներկայացումից յետոյ կը դադարեն խաղալ. դրա համար զուր պէտք է ուրախանաք և ոչ թէ ցաւէք, որովհետև ձեր ցանկութիւնը այդ է, որ ներկայացումներ չլինեն, որովհետև խումբը բաղկացուցիչ մշակիը յանձնել է պ. պ. Թարխանեանին և Հախումեանին, այսինքն նրանց, որոնք չեն պատկանում Քալանթար և ընկ. խմբին. ինչու ուղիղը չէք խոստովանում պարոնայք: Դուք, այնքան քաղաքականութիւն ունենայիք, որ լռէիք, և չերևար ձեր դիմակը: Ասացէք խնդրեմ, ինչ մեղաւոր է հայ բեմը, ինչ մեղաւոր են դերասանները:

Այդ աստիճանի ստորանալ, ստոր կրքերի զոհել թատրոնը:

Եւ այդ ամենը դեռ գործ չսկսած, դեռ ներկայացումներ չեղած. զարմանալի գուշակութիւններ:

Միթէ միևնոյն կերպով չէք վերաբերվում և այսօրի խմբին. բաղկացեալ անի Ս. միթէ 22 հոգուց բաղկացած խմբի տուած 4—5 ներկայացմանն չգտաւ մէկին, որ իր դերը չփչացնէր ի բաց չանելով և Տ. Սիրանոյշին և պ. Թուրքեանին: Միթէ այնքան խաղացած պիէսներից և ոչ մէկը զուր եկաւ նրան, որ անդադար իր՝ իբր թէ ռեցենզիաներում, վատաբանում է և անեզր պահանջներ անում դերասաններից:

Ճարահատեալ մտաբերում եմ այդպիսի պարոնների արածները տեսնելով, անմահ Կրիլովի առակներից մէկը «Сапожникъ и Пирожникъ»:

Ընդունեցէք և այլն:

Ներսէս Աւետեան

6 Նոյեմբերի 1897 թ.
Բաքու:

* *

Այս աշնան, Մոսկվայի համալսարանի բժշկական մասում իրանց ուսման ընթացքը աւարտել են և բժշկի աստիճանին արժանացել 280 անձինք: Սոցա թւումն են 17 ռուս կին-բժիշկ արտասահմանի համալսարաններից: Յիշեալ 280 մարդոց մէջը վրացի կաթոլիկ է պ. Չարէքեան և ութ հայ: Առաջ ենք բերում այդ նորաւարտ հայ բժիշկների ցուցակը:

Պ. պ. Նիկողայոս Աթէնեան (այդ երիտասարդը Թիֆլիզ քաղաքի կոմս Լօռիս-Մելիքեանի անունով հաստատուած դրամագլխի թոշակն էր ստանում), Յակոբ Մուրադեան, Մկրտիչ Մանուչարեանց, Վրթանէս Վարթանէսեանց, Նիկողայոս Տէր-Մահակեան, Փարսեղեան, Վաղարշակ Քալանթարեան և Համբարձում Քէշէկեան:

* *

Քառասն տարուց ի վեր Թիֆլիզում գոյութիւն ունին պ. Գ. Աղէքսանդրեանի կաշուի եւ թաղիքի գործարանները, որոնք մեր երկրի արդիւնաբերական ամենաօգտաւէտ հաստատութիւններից մէկն է և այդ գործարանների զանազան բաժիններում աշխատում են հազարաւոր բանւորներ, Թիֆլիզի և գաւառի աղքատ դասակարգից, ազատ մնալով պարապութիւնից, նրա հետ կապուած մոլութիւններից ու փողոցի ապականիչ ազդեցութիւնից: Այդ արդիւնաբերական հաստատութիւնն բազմամեայ տալով հազարաւոր բանւորների, հաց է մատակարարում նրանց հազարաւոր ընտանիքներին: Պ. Աղէքսանդրեանը դեռ անցեալ տարի թոյլտւութիւն ստացաւ իր ձեռնարկութիւնը ակցիոներական ընկերութեան վերածելու և կանոնադրութիւնը Բարձրագոյն հաստատուեց անցեալ տարի: Ներկայ նոյեմբերի 9-ին կազմակերպուեց ընկերութիւնը և նրա վարչութիւնը: Ընկերութեան հիմնական դրամագլուխն է 1,500,000, բաժանուած 6000 բաժնետոմսերի, իւրաքանչիւրը 250 ռուբլի արժողութեամբ: Ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը կայացաւ նոյեմբերի 9-ին և ընտրուեցան վարչական անձինք: Ընկերութեան վարչութիւնը կազմակերպուեց երեք դիրեկտորներից, որոնք են պ. պ. Գ. Աղէքսանդրեան, Յ. Տոփչեան և Մ. Թումայեան, իսկ նրանց կանդիդատներ պ. պ. Գ. Սարայեան և Ս. Անանեան: Վերստուգող յանձնաժողովի անդամներ ընտրուեցան պ. պ. Մ. Աւթանդիլեան, Յ. Թայիրեան և Մ. Խալաթեան:

* *

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, նոյեմ. 24.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Երէկ, նոյեմբերի 23-ին, Կայսերական ճեմարանի բնագիտական դասախօսական լինելութեան ֆիզիքական լսարանում, մեր հայրենակից բժիշկ Գէորգ Թամամշեանը պաշտպանեց իր մի գիտնական հետազօտութիւնը՝ բժշկապետի աստիճան ստանալու համար: Պ. Թամամշեանը վերջացնելով իր ուսման ընթացքը Թիֆլիզի առաջին գիմնազիայում, 1886 թուին մտաւ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը և 1891 թուին ենթարկուելով պետական քննութեան, արժանացաւ բժշկի աստիճանի:

1892 թուից սկսած, պարապելով Փարիզում Պաստորի ինստիտուտի քիմիական բակտէրոլօժի գործարանում և 1894-ից Վիեննայում „Allgemeine Krankenhaus" գործնական բժշկականութեան մասում, պ. Թամամշեանը հրատարակեց իր հետևեալ գիտնական հետազօտութիւնները.

1) Expériences sur les vaccins phéniqués de Haffkine (Տպագրուած է Annales de l'Institut Pasteur" Paris 1892. T. 6 № 10.)

2) Опредѣленіе токсической силы „тифлисскаго" холернаго яда при интраперитонiальномъ впрыскиваніи морскимъ свинкамъ. (Տպագրուած է „Отчетъ Военно-Медицинской лабораторіи Кавказскаго Военнаго Округа. 1892 г. հրատարակութեան մէջ:)

3) О противохолерныхъ прививкахъ по способу Хавкина. Այս գիրք արւած է Պաստէօրի ինստիտուտում (Տպագրուած է „Протоколы Императорскаго Кавказскаго Общества" հրատարակութեան մէջ)։

4) Топографія физіологическаго запаса фосфора въ животномъ организмѣ.

Ահա հէնց այս վերջին աշխատութիւնն է, որի վրայ հեղինակը աշխատել է երկու տարի շարունակ, ներկայացրած փակուլտետին բժշկականութեան դոկտորի աստիճանն ստանալու համար։ Դիսսերտացիայի պաշտպանութիւնը հրապարակական էր։ Այս հետազօտութիւնը ընդդիմախօս պրոֆեսօրները յայտարարեցին իբրև հազուագիւտ վերին աստիճանի երկարատև մանրակրկիտ քննութեանց շնորհիւ և մեծ նշանակութիւն ունեցող, քանի որ որոշում է նորմալ և սովի ենթարկուած կազմուածքների գործարաններում և հիւսուածքներում ֆոսֆորի քանակութիւնը։

Պաշտպանութեան վերջում, հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով ողջունեց երիտասարդ բժշկապետին, երկար ծափահարեցին նաև իրենց պրոֆեսօրները, մի հանգամանք, որ ինչպէս յայտնի է, բաւականին հազուագիւտ երևոյթ է ներկայացնում։

N.

***

ԲԵՌԼԻՆ, Նոյեմբ. 7.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Հայ ուսանողների թիւը այս տարի արդէն քսանից անց է և նկատելի է որ Բեռլինը տարէցտարի աւելի ու աւելի պիտի կենդրոն դառնայ հայ ուսանողութեան, շնորհիւ իր առաջնակարգ համալսարանի ու բարձրագոյն դպրոցների, եթէ կեանքի թանգութիւնը դրան մասամբ արգելք չլինի։

Երկու տարուց ի վեր այստեղի համալսարանի դռները էլ բացին կանանց առաջ և շատ ցանկալի էր, որ հայ օրիորդներն էլ հետեւէին Զուիցերիայի փոխանակ փոքրէին Բեռլինում ուսանելու, որ կարծեմ շատ բաներով բարձր ու գերադանց է Ժընեւից, ուր առատօրէն խմբւում են մեր օրիորդները։

Ահա անցեալ ուսանողների անուանական ցանկը և պարապման առարկաները այն չափով, որքան դա միայն իմանալ կարելի եղաւ։

Մանասեան,—Պոլիտեխնիքում. Առաքելեան—լեզուաբանութեան Ճեմարանում—հասարակագիտութիւններ. Բունիաթեան—հասարակ. գիտութիւններ Խախանեան. Մէժլումեան—Պոլիտեխնիքում. Վանցեան — փիլիսոփայութիւն և գեղարուեստ. Աւագեան, Տէր Դաւթեան Թումայեան—բժիշ. Կոմիտաս վարդապետ — երաժշտութեան. Յովհաննիսեան, Տէր Մարկոսեան—բժիշ. Աւետեան — հասարակ. գիտութեան. Սարգսեան, Մելիք Ղարագեոզեան. Քալանթարեան — փիլիսոփայութեան, բժիշ. Այգեկցեան—հասարակ. գիտութեան. (դիպլոմատ) Տէր-Աւետիքեան—Բնագիտութեան։

...ազդեցութիւնից զերծ մնալ և սրբել մի չնչին տարր, միացնել կարողանային ուսանողներին մի ընդհանուր գործ առաջ բերելու նպատակով։

Ապաւէնք և յոյսեր։

Ուսանող։

***

Կուկիոյ Ներսէսեան Աստուածածին եկեղեցու ծխականներից պ. Խարագեանը բողոքել էր Կոնսիստորիային երեցփոխանական ընտրութեան դէմ։

Կոնսիստորը յարգելով պ. Խարագեանի բողոքը, վճռել է իսպառ հեռացնել երեցփոխան Եսայի Առաքելեանին, իսկ հաշուեհատ պ. պ. Յարութիւն Պետրոսեանին, Սարգիս Խարագեանին և Բագալ Ոսկերչեանին հաստատել։

***

Ներքին գործոց նախարարութիւնը ի նկատի ունի շատ մօտ ապագայում բանալ Ռուսիայի զանազան կողմերում թոքի հիւանդութիւն ունեցողների և բորբաների համար բուժարաններ բանալու հարցը։ Այդ բուժարաններից մէկի բացումն գլխաւորապէս Կովկասում։

***

ԴԱՏԱՒՈՐ ՄԻ ԷՐ ՈՐ ՑԱՍՏՈՒԾՈՅ ՈՉ ԵՐԿՆՉԷՐ ԵՒ Ի ՄԱՐԴԿԱՆԷ ՈՉ ԱՄԱՉԷՐ

—

...կէտից ղեկավարող սկզբունքները իրանց և պարտաճանաչութեան մէջ են կրթում ու վարժեցնում ժողովրդին։

Հայ եկեղեցական պաշտօնեաների ընտրութիւնը յայտնի է որ ժողովրդական է. եկեղեցու գոյութեան երկար ընթացքում այդ սկզբունքը ունեցել է ահագին նշանակութիւն. Անընդհատ և յաջող ընտրութիւնը ընտրողին ընտրողների հետ փոխադարձ հաւատարմութեամբ կապելով՝ գրաւական է դառնում ապագայում արդիւնաւէտ գործունէութեան։ Անխարդախ ժողովրդականութիւն ձեռք բերելու համար, հարկաւոր է տարիների տևուն ու համեստ աշխատանք ու անկեղծ համակրութիւն. հարկաւոր է զգալի և իրական կերպով ցոյց տալ իր օգտակարութիւնը։ Այդ այդպէս լինելուց յետոյ, ինչ անուն պէտք է տալ այն մարդուն, որին յանձնուած է գործերի ղեկավարութիւնը և տնօրինութիւնը և որ, փոխանակ յարգել ժողովրդին իրաւացի և արդարացի լինելու ճանաչուած աշխատաւորներին գնահատելու մէջ և հետևողական վճիռների մէջ, իր գործողութեամբ օրինակ է տալիս խարերայութեան և այսօրուան հասարակական վճիռը վաղը քանդում է առանց որ և արդարացնող պատճառի։

Պատմենք իրողութիւնը։ Սրանից երեք տարի առաջ, երբ դեռ այս թեմը թափուր էր և այժմեան թեմ. առաջնորդը...

...սեմինարիայի պահպանութեան համար, միայն կէսը կըտայ, իսկ միւս կէսը պարտքի հատուցման կերթայ։

Ալէ—Բօլու

1 Նոյեմբերի 1897 թ.
Մոզդոկ։

***

Կիրակէ Նոյեմբ. 9-ին Թիֆլիզի եկեղեցու Միքայելեան տեխնիքական դպրոցում կատարուեց տարեկան հանդէսը բազմաթիւ ժողովրդի ներկայութեամբ։ Դահլիճում ցուցահանուած էին աշակերտների գործերը գծագրութեան, մեքենագործութեան և այլ արհեստների արտադրութիւնները, որոնք կատարուած են մեծ յաջողութեամբ։ Կարդացուած հաշուից երևաց, որ ներկայ տարուան ընթացքում քննութեան են ներկայացել 50 աշակերտներ, որոնցից ընդունուել են միայն 31. Ուսումնական տարուան սկզբում աշակերտների թիւն եղել է 80, տարուան ընթացքում դուրս են գնացել 7 և տարուան վերջը մնացել են 73։ Ըստ դաւանութեան, այդ աշակերտները բաժանվում են հետևեալ կերպով, ուղղափառներ—47, հայ-լուսաւորչականներ—11, կաթոլիկներ — 8, լուտերականներ—5 և հրէաներ—2։ Այս տարի դպրոցի երկամեայ դասընթացն աւարտել և վկայական են ստացել 11 հոգի։ Իսկ դպրոցի հիմնարկութեան օրից մինչև այսօր աւարտողների թիւն է 233։

ՖԵԼԻԵՏՕՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

կառավարչին, ճանապարհների ինժեներների դէմ, որոնց շնորհիւ ոչ մի ջանք չէ լինում ճանապարհը տարբերել և կանոնաւորելու ճանապարհորդներից մի քանիսը հեռագրով դիմել են պ. Նախարարին, խնդրելով նրա միջամտութիւնը։

* * *

«Կավկազ» պաշտօնական թերթը հաղորդում է թէ Թիֆլիզի տեխնիկական օգնական է նշանակւում Թիֆլիզի նահանգական հաշտարար դատաւորի օգնական պ. Գ. Կովալեվ։

* * *

«Տիֆլ. Լիստ.»-ի Ղազախի թղթակիցը շատ օտարմիտական աչքով է նայում արիւնհեղութիւններով և կողոպուտներով լի Ղազախի վրայ, որովհետև Ղազախի գաւառի աւազակներից մի քանիսը բռնուած են։ Այդ մասին թղթակիցը պատմում է հետևեալը… Գաւառապետ պ. Կանչելին քայլ առ քայլ հետևում էր Մուստաֆա և Խալիլ աղա աւազակներին և նրա խմբերին, որ վաղուց սոսկումն էին ձգել Ղազախում, ունենալով պաշտպաններ և պատսպարողներ։ Դեռ ամառը նրանց հետամուտ էին լինում, բայց աւազակախումբը գաւառից հեռացել էր և գաւառապետի առած տեղեկութիւններին նայելով, խումբը մտադիր էր անցնել Պարսկաստան, ձմեռն այնտեղ մնալ և գարնան կրկին վերադառնալ և իր սխրագործութիւններով մոռացնել տալ Քերամի և ուրիշների արածները։ Պ. Կանչելի աչալրջութեամբ հետևում էր խմբի անդամներին և իր գործակալների միջոցով իմանալով որ նրանք արտասահմանեան անցագրեր են առել և ցանկանում են Բաքւով անցնել Պարսկաստան, ուղարկեց Բաքու իր թարգման Մեհտի աղա Վէքիլովին, որին և յաջողուեց նոյեմբերի 7-ին ձերբակալել յիշեալ աւազակախմբի բոլոր անդամներին, նրանց ուղեցոյցի հետ միասին։ Այդպիսով Ղազախի գաւառը ազատւում է ապագայ տերրորից»։

Ճառ լաւ է, ի հարկէ, եթէ Ղազախում այդ ձերբակալուածներից ի զատ ոչ մի աւազակ չլինի. բայց Ղազախի գաւառը ծիծեռնակներից առաւ, միշտ աւազակներ է արտադրում։

* * *

ԱԽԱԼՑԽԱ նոյեմբ. 7.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Արդէն շատ անգամ հարց է ծագել, որ Բորժոմի երկաթուղու գիծը շարունակուի մինչև Ախալցխա և ապա Արտահան, բայց զանազան հանգամանքների առիթով, հարցը մնացել է մինչև այսօր չլուծուած։ Երկաթուղու անհրաժեշտութեան մասին Ախալցխայի համար, յաճախ թէ մամուլի և թէ պետական շրջաններում խօսուել է։ «Նովոյէ Վրեմիա»յի գրի մի նկատողութիւնը երկաթուղու անհրաժեշտութեան մասին, առիթ տուեց իմ կարծիքը յայտնելու այդ հարցի մասին։ Այդ խնդիրը Ախալցխայի համար ահագին նշանակութիւն ունի իր բնական հարստութիւններով, օդի, ջրի արժանաւորութիւններով, գիւղատնտեսական բերքերով, մրգերով, հողի ու կլիմայի յատկութեամբ և այլ հանքային հարստութեամբ։ Ախալցխայի համար անհրաժեշտ կարիք է զգացւում երկաթուղու գիծ կառուցանելու։ Օրինակի համար, վերցնենք ամենքից աչքի ընկնող յարմարութիւնները։ Նախ, մեր Ախալցխան, ինչպէս յայտնի է, համարեա ամբողջ Ռուսաստանի մէջ մրցում է իր առատ և պատուական մրգերով և բանջարեղէններով։ Ամենայն տարի ահագին քանակութեամբ (օրական մօտ 4-5 վագոն) ուղարկւում է Ռուսիայի և Կովկասի զանազան քաղաքները։ Այս գործի զարգացմանը երկաթուղին մեծ զարկ կըտայ։ Երկրորդ՝ Ախալցխան հանդիսանում է այսօր որպէս մի հիանալի կլիմա ունեցող վայր, որ իր շրջակայքում այնպիսի ջերմուկներ (Աբասթուման, Ուռավել, Ծինսքան և այլն) ունի, որոնք համբաւ են առել ամբողջ Ռուսաստանում։ Մեր քաղաքի երրորդ առաւելութիւնը կայանում է իր հաղորդակցութեանց արժանաւորութիւնը շրջակայ քաղաքների և գիւղերի հետ։ Այսպէս օրինակ. միշտ ապրանք է ուղարկւում և ստանում Արդահան, Ախալքալաք, Ալէքսանդրապոլ, Արդուին, Աբասթուման, Բորժոմ, և ամեն տեղ ունի կանոնաւոր խճուղի ճանապարհներ։ Չորրորդ յարմարութիւնը երկաթուղու գծի համար նկատւում են Ախալցխայի շրջանի առատ հանքային հարստութիւնները և հողերը։ Օրինակ. Ուռավել գիւղի մօտերքում հնա մի քանի տարի է, յայտնուել է ինֆուզորային սպիտակ հող, որ եւրոպացիները կապալով են վերցրել 72 տարի ժամանակով և ամենայն օր ահագին քանակութեամբ ուղարկւում են արտասահման։ Նոյնպէս արդէն սկսուել է մարմարեայ քարերի մշակութիւնը։

Մի քանի տեղեր երկաթի հանքերի հետքեր են երևացել և այլն։ Հինգերորդ՝ Ախալցխան յայտնի է իր բնակիչ գիւղատնտեսութեամբ։ Նշանաւոր են մեր խեցեղէնները, բուրդը, զանազան ձեռագործներ, ապա արհեստաւորների շինուածքներ (ոսկերիչների և արծաթագործների ձեռագործները) որոնք ամենայն տարի ահագին քանակութեամբ օտար երկրներ են ուղարկւում ծախելու։

Այստեղ յիշեցի միայն ամենահասարակ առաւելութիւնները, որից տեսնում ենք որ մեր Ախալցխայի համար երկաթուղին անհրաժեշտ կարիք է և գրանով կարող է մեծ զարկ տալ թէ առևտրին և թէ մանաւանդ արդիւնաբերութեանը։ Ամենայն տարի մեր ապրանքը օտար երկրներ արտահանելու համար մեծ դժուարութեանց ենք հանդիպում։ Մանաւանդ գարնանը և աշնանը մրգերի (խնձորի և տանձ) արտահանութիւնը ամիսներով մնում է մինչև որ ապրանքի տէրը կարողանայ ֆուրգոն կամ սայլ ձեռք ձգել։

Տարուայ միւս ժամանակներում Ախալցխայից մինչև Բորժոմ քըէհը փթին առնում են 4—5 կոպ. իսկ աշնան ամիսներումը մինչև յունվար, փութը բարձրանում է մինչև 15—20 կոպէկ. մի քանի անգամ կրկնապատկւում է։ Հէնց այս տարի փթի վարձը այժմ մինչև Բորժոմ (76 վերստ) առնում են 19 կոպէկ, այն էլ դժուարութեամբ է գտնւում, որովհետև մի քանի մենավաճառներ վարձել են բոլոր ֆուրգոնները և սայլերը։

Որքան վաճառականներ գալիս են Ռուսիայի և Կովկասի զանազան քաղաքներից մեր մրգերի համար (խնձոր), բայց ապրանքի դժուարութեամբ ուղարկելու պատճառով, փոխանակ 1000 արկղ առնելուն, վերցնում են 500, որովհետև չեն կարողանում ժամանակին տեղն հասցնել։ Ի նկատի առնելով այս բոլորը, ընթերցող կըհամաձայնի, որ երկաթուղին մեր Ախալցխայի համար անհրաժեշտ կարիք է և որ մի այնպիսի արդիւնաբեր վայր կարելի է օգտակար դարձնել ամբողջ երկրի համար։

Խ. Սամուէլեան։

* * *

ՉԱԼԹԻ ԳԻՒՂ (Ն.-Նախիջ. գաւառ)

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

1893 ից սկսած, շարունակ չորս տարի, մեր շրջանի հինգ հայաբնակ գիւղերը Չալթր, Թոփթի, Փոքր-Սալա, Մեծ-Սալա, և Նեսվիթայ—առատութեան երես չեն տեսել։ Գիւղացոց մեծամասնութիւնը, որի ապրուստի աղբիւրը հողագործութիւնն է, առատութեան տարիներում ամբարած ցորենը մի կողմից ամենաէժան գնով, (10 փ.—5 ռ.) վաճառելով, այս տարի ոչ ուտելու և ոչ ցանելու ցորեն ունի. շատերը այսօրուանից իսկ սկսած փութը 1 ռ. 30 կոպէկով ալիւր են գնում։

Կարելի է երևակայել ինչ պէտք լինի այդ խեղճերի վիճակը այս ձմեռ, որ արդէն սկսուած է այստեղ, երբ եղած աշխատանքի բոլոր ճանապարհները փակւած են։ Սակայն միւս կողմից հարուստները և կալուածատէրերը որոնք առատ տարիներում հաւաքած ցորենը ամենաէժան գնով չեն փչացրել, իրանց ամենաանհրաժեշտ կարիքները լցուցանելու համար, ինչպէս աղքատ գիւղացին, այժմ սկսել են ծախել խոփը (10 փ.). 12 ռուբլով։ Սակայն, ընդհանուր առմամբ, մեր շրջանի թէ հայ և թէ ռուս գիւղացու դրութիւնը ամենայուսահատական է։ Ամեն տեղ առևտուրը ընկած է. բանւոր դասակարգին աշխատանքի ոչ մի աղբիւր չկայ, որի հետևանքն է բազմաթիւ գողերի երևան գալը. ամեն գիշեր ձի են տանում. ճանապարհներն եւ վտանգաւոր են դարձել։

Այսպիսի դժուար տարիներում հարուստները պէտք է իրանց սրբազան պարտականութիւնը համարեն, յուսահատական դրութեան մէջ գտնուած, իրանց համագիւղացի թշուառ եղբայրներին օգնութեան ձեռք կարկառել։ Մեր թեմի եկ. ծխ. դպրոցներն եւ ենթարկուած են լուսաւորութեան նախարարութեան։ Հոկտեմբերի 3-ին թեմական տեսչի օգնականի միջոցով ստացուեցաւ մեր ծխ. դպրոցներում Դոնի Զօրաց նահանգի ժողովրդական ուսումնարանների տեսուչ պ. Ա. Օստրոումովից տեղեկագրի ցուցակ, որով պահանջւում է հոգաբարձութիւններից՝ ներկայացնել Ռուսերէն լեզուով մանրամասն ուսումնական և տնտեսական հաշիւ։

Լուսո։

* * *

Պիւրակէ նոյեմբերի 9-ին Վանքի մայր եկեղեցում հոգեհանգիստ կատարուեց սինօդի հանգուցեալ անդամ Երեմիա արք-եպիսկոպոսի յիշատակին։ Հոգեհանգստին ներկայ էին պ. Կառավարչապետի օգնական գեներալ Ա. Ֆրեզէ, Թիֆլիզի կամենդատ գեներալ Ի. Բէյաէք։ Հրաւիրուած էին նաև համքարներ, ուսուցիչներ. ներկայ էր և մի ռուս քահանայ։ Որովհետև հոգեհանգստին ներկայ չէր թեմակալ սրբազան առաջնորդը և տեղական բնակիչներն գիան, ուստի անհասկանալի մնաց թէ ում կողմից էր նշանակուած այդ հոգեհանգիստը։

* * *

Էջմիածնից գրում են «Մշակին»։ «Երեքշաբթի հոկտեմբերի 4-ին, երեկոյեան ժամը 3-ին, Երևանի նահանգական դատարանի պրոկուրորի կարգադրութեամբ տեղի ունեցաւ Երեմիա արքեպիսկոպոսի դիակի անդամահատութիւնը, ներկայութեամբ նահանգական դատարանի պրոկուրորի օգնականի, Երևանի քաղաքային բժիշկ Աւագովի, մի զինուորական բժշկի և տեղական գաւառական բժիշկների և այլ պաշտօնական անձանց։ Հանգուցեալի դիակի անդամահատութեան կարգադրութիւնը հետևանք էր պաշտօնական և մասնաւոր աղբիւրներից բղխած կասկածների, որ իբրև թէ սրբազանի մահը բնական մահ կերպարանք չունի. անդամահատութիւնից երևաց, որ Երեմիայի մահը առաջ է եկել սրտի պայթիւնից, արեան պակասութեան պատճառով»։

Ուրեմն «Մշակ» և «Կավկազ» լրագիրները իզուր էին յայտարարել թէ հանգուցեալ Երեմիա արքեպիսկոպոսը դեռ շատ երիտասարդ էր, առողջ և երկար կարող էր ապրել։ Պաշտօնական անդամահատութիւնը հերքեց այդ հաստատութիւնները։

* *

«Մշակին» գրում են Էջմիածնից։ Երեմիա արքեպիսկոպոսի դագաղի վրայ դնելու համար պսակներ են պատրաստւում սինօդի պրոկուրորի եւ իր ընտանիքի եւ սինօդի ծառայողների կողմից. . .

* * *

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱԳՎՈՒՄ

Ամսոյս 6 ին խաղում էին Լ. Կամսեղեղի «Քոյր Թերեզա» հինգ գործողութեամբ դրաման։

Թատրոնը այս անգամ համարեա թէ լիքն էր հասարակութեամբ, թէև պարտերի առաջին կարգերը՝ մեր հարուստների տեղերը, դատարկ էին. ասում ենք այս անգամ թատրոնը լիքն էր, որովհետև նոյնը չէ կարելի ասել մինչև այժմ եղած խաղերի ժամանակ, երբ կիսից աւելի դատարկ է եղել թատրոնը։ Հարց է, ինչով բացատրել հասարակութեան անտարբերութիւնը, թատրոն չյաճախելը. հասարակութիւնն է մեղաւոր, թէ մի այլ պատճառ կայ։ Թատրոնը հասարակութեանը գրաւում է, հետաքրքրեցնում է երկու կողմով—իր բեմերգութեան կենսունակութեամբ և յայտնի դերակատարների խաղով։

Բագուի խումբը մինչև այժմ չունի օրինաւոր հետաքրքրական բեմերգ. մինչև այժմ խաղացուած պիեսները մեծ մասամբ գրական արժանիք չունին. ոչ մի նոր խնդիր չեն շօշափում, և ոչ էլ մեր կեանքն են պատկերացնել, ի բաց առեալ «Բաղդաւոր աղջար» պիէսը։

Այս բանում ի հարկէ մեղաւոր չէ դերասանական խումբը և ոչ էլ այն յարգելի տիկինը և պարոնները, որոնք յանձն են առել հոգալ դրամական մասը. այլ մեղաւոր և դատապարտելի են այն ինտելիգենտ պարոնները, որոնք յանձն են առել բեմերգ պատրաստել և չեն կատարել իրանց խոստումը։

Մայիս ամսից մինչև հոկտեմբերի կէսը մի այնպիսի ժամանակամիջոց է, որի մէջ կարելի էր բեմերգ կազմել. բայց մեր պարոնները սիրում են բնաբուել—գործի մէջ մտնել, իսկ գործ կատարել ոչ. յանձն են առնում և չեն կատարում ու չեն հրաժարւում այնպիսիներին, որոնք և ձեռնհաս են և իրանց պէս չեն զանդաղել թէ ժամանակ չունին։ Գործի մէջ լինելու բաղձանքը լաւ ձգտում է, եթէ հետը կապուած է և գործունէութիւն. դատապարտելի է, երբ միայն անգործունէութիւն է տիրապետում։ Միայն այժմ, երբ ամեն կողմից ստիպուած է լինում, միայն այժմ են դիմում սրա կամ նրա օգնութեանը։ Մինչև այժմ ցանկանում էին միայնակ լինել, բայց այժմ, երբ հասարակութեան պահանջը խիստ է, երբ գործը դադարում է, նոր են գլխի ընկնում, երբ սեզոնի կէսը արդէն անցել է։ Բայց «լաւ է ուշ քան երբէք»։

Միւս պահանջին, նոյնպէս բաւարարութիւն չէ տալիս կոմիտէտը, չկարողանալով նորանոր ուժեր բեմ դուրս բերել. թէև այս բանում նրան մեղադրել չէ կարելի, որովհետև Բագւում յայտնի նոր ուժեր չունին, որոնց անհատական խաղով հասարակութիւնը հետաքրքրուէր և թատրոն յաճախէր, բայց և այնպէս, էլի Բագւումն է գտնւում տիկին Հրաչեայ, իսկ այժմ Թիֆլիզումն են մեր տաղանդաւոր կոմիկ Տէր Դաւթեան, և նոր ուժեր օր. օր. Խիթարեան և Իգմիրեան։ Ինչն է արգելում ամեն կերպ աշխատել մի կամ երկու ներկայացումի համար յիշեալ յարգելի ուժերից ամեն մէկին հրաւիրել Բագու, բեմ դուրս բերել, որ հասարակութիւնն էլ հետաքրքրուի և թատրոն յաճախի։ Ներկայացումների անյաջողութեան խոստովանում է և մեր դերասանների անպատրաստ, դերը չսովորած, չիմացած բեմ դուրս գալը. սկսած յարգելի տիկին Սիրանոյշից, մինչև յետին դերասանը համարեա, քիչ բացառութեամբ, իրանց առանձնած դերերը չեն իմանում. ամեն մէկը, մի կամ երկու անգամ բեմի վրայ յանկարծ կանգնում է, դերը չէ յիշում, որովհետև չէ սովորել և երբեմն ամբողջ պարբերութիւնը դուրս է թողնում։

Մենք կարծում ենք, որ այժմ քան երբէք, մեր դերասանները աւելի միջոց ունին լաւ պատրաստուելու. առաջ անգամները ամեն մի հոգս և խաղալը կատարել են իրանք դերասանները. իսկ այժմ ամեն մի կողմնակի թատրոնական հոգսերից ազատ են, ստանում են բաւարար վարձատրութիւն և ուրեմն հոգեպէս աւելի խաղաղ վիճակի մէջ են և աւելի լաւ պիտի պատրաստուին. բայց այդ ձգտումը նկատելի չէ։

Մի քանի խօսք էլ ամսոյս 6 ի «Քոյր Թերեզայի» ներկայացման մասին։ Դրուածքի մասին խօսելն աւելորդ է, նա շատ լաւ ծանօթ է արդէն թատրոնական աշխարհին և նրա մասին շատ տարբեր կարծիքներ կան։

Մենք միայն զարմանում ենք, որ կոմիտէտը ամենևին ի նկատի չէ առնում մեր բեմի այժմեան պահանջները և ժամանակ է գտնում այժմ այդ գրուածքը բեմ հանել։ Բաւական չէ այն հանգամանքը, որ յարգելի տաղանդաւոր օր. Սիրանոյշը սիրում է այս գրուածքը. իսկ հասարակութեան համար ցանկալի է որ յարգելի տիկինը իր մեծ շնորհը վատնէ աւելի նոր կենսական պիէսների վրայ։ Դալով խաղին, պէտք է ասենք որ յարգելի տիկինը լաւ խաղաց թէև երևում է որ դերը լաւ չգիտէ. յարգելի տիկնոջ մասին ուրիշները շատ գրել ու գովել են. մենք ոչինչ չունինք աւելացնելու։ Կը խօսենք ուրիշների խաղի մասին. սխալուած չեմ լինիլ եթէ ասեմ որ ամենից լաւ խաղաց օր. Վարդուհին. ծեր, խորամանկ, նախանձոտ իր Ջուլէպայի դերը անման տարաւ. գրիմը նոյնպէս միանգամայն համապատասխան էր դերին, ձայնի մէջ կեղծութիւն խորամանկութիւն և նախանձը պարզապէս նկատելի էին, և դրա հետ միացնելով արտաքին ձևերը, իրօք ներկայանում էր նախանձոտ, չար ու կեղծ բարեպաշտ կոյս. այնքան լաւ կատարեց, այնքան զզուելի դուրս բերեց, որ հասարակութիւնը իրօք ատեց այդ տիպը և մոռանալով, որ օր. Վարդուհին միայն դերակատար է և ոչ թէ իսկական Ջուլէպպա, չծափահարեց օրիորդին. (խօսք չկայ, լաւ գնահատողներ են)։ Ճառ լաւ էր և տիպիքական պ. Աւետեան՝ Դրանի դերում. իր գրիմով շարժուածքներով և ծերի դողդոջուն ձայնով շատ հետաքրքրեց հասարակութիւնը և լարեց նրա ուշադրութիւնը, թէև դերը փոքր էր և աննշան։ Պ. Պետրոսեան այս անգամ էլ, ամեն կերպ պատրաստուած էր խաղում։ Օր. Վարգինեան շնորհալի կերպով խաղում էր Եւգենիայի աննշան դերը, որի մէջ չէ կարելի բառ արժանւոյն գնահատել նրա ընդունակութիւնները. նա ընդունակ է աւելի պատասխանատու դերեր խաղալու. Լաւ էր և տիկին Աւետեան ճնշուած, մաքուր քոյր Ցեցիլիայի դերում. իր մեղմ շարժուածքներով ու ձայնով պատկերացնում էր, իրօք ճնշուած, բաղդի ձեռից հալածուած կոյսի տիպը։ Տիկին Մելիքեան շատ լաւ տարաւ իր դերը և լաւ տպաւորութիւն թողեց հասարակութեան վրայ։

Ա. Բալայեան

8-ն նոյեմբերի։

* * *

Վերջին օրերս սկսել է հացը, ցորենը և գարին թանգանալ Թիֆլիզի շուկայում, որովհետև այլ ևս այնքան չէ բերւում գիւղերից, որքան առաջ։ Ցորենն այժմ վաճառւում է փութը 1 ռ. 20 կոպէկ, մինչդեռ անցեալ տարի արժէր 90 կ.—1 ռ., Գարին 75—80 կ., իսկ անցեալ տարի արժէր 40—45 կ., Ալիւրի գինը 1 ռ. 20 կոպէկից բարձրացել է 1 ռ. 50 կոպ.։ Հարաւային Ռուսիայից Թիֆլիզ էր բերւում օրեկան 200—300 փութ ցորեն և ալիւր, իսկ այժմ բերւում է միայն 60-80 փութ։

* * *

Մինչև այժմ մեր քաղաքի ազգաբնակութիւնը հնարաւորութիւն ունէր փայտը, ածուխը, պտուղ և այլ կենսական պիտոյքները գնել ուղղակի «առաջին ձեռքերից», որովհետև գիւղացիք սայլերով և բեռներով բերում էին այդ պիտոյքները քաղաք և պտտեցնում փողոցէ փողոց. Վերջին ժամանակներս ոստիկանութեան հրամանով արգելուեց գիւղացիներին պտտեցնել իրանց սայլերը քաղաքում, որով քաղաքացիք ոչ միայն զրկուեցին դիւրութեամբ կենսական պիտոյքներ գնելու յարմարութիւններից, այլ և այդ պիտոյքների գները կարճ ժամանակում առաջուանից անհամեմատ թանգացան։ Ուստի Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը յուզեց քաղաքացւոց գանգատները, այս օրերս մտադիր է դիմել պ. ոստիկանապետին և բանակցել, որպէս զի կրկին թոյլ տրուի գիւղացիներին ազատ պտտեցնել փողոցներում, անհրաժեշտ կենսական պիտոյքները։

* * *

Խրիմում թիւրք և ռուս լեզուներով հրատարակւող «Թերջիման» լրագիրը հաղորդում է, որ Թաւրիզում սկսել է հրատարակուել մի նոր պարսկական լրագիր «Նորութիւններ» վերնագրով։ Լրագիրն իր առաջին համարում յայտարարում է թէ ինքը պիտի նուիրուի Պարսկաստանում առևտրի, արդիւնաբերութեան և երկրագործութեան ծաղկեցնելուն։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * «Նովոյէ Վրեմիան» խօսելով ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան տարեկան բիւջէի մասին, գալիս է այն եզրակացութեան թէ ռուս հասարակութիւնը կրթութեան գործի համար 5—7 անգամ աւելի է ծախսում, քան կառավարութիւնը, որ միայն մի 4% է յատկացնում իր բիւջէից ժողովրդական լուսաւորութեան գործին։

Մինչդեռ իրերի այսպիսի վիճակը կանոնաւոր է—հարցնում է լրագիրը—հասարակութեան պահանջների և կառավարութեան արած ծախքերի մէջ հաւասարակշռութիւն մտցնելու համար անհրաժեշտ է որ կառավարութիւնը կրթական գործերի համար իր արած ծախքերը դէթ հաւասարեցնի այն ծախքերին, որ անում է հասարակութիւնը։ Երբ պետութիւնը կսկսի ծախսել կրթական գործի վրայ նոյնքան, որքան ժողովուրդը, այսինքն 100 միլիոն, այն ժամանակ ի հարկէ, դպրոցների պակասութիւն չի զգացուի և ոչ միայն տարրական, այլ և միջնակարգ և բարձրագոյն դպրոցների։

Լրագիրը գտնում է որ կառավարութիւնը կարող էր հեշտութեամբ հասնել այդ նպատակին ոչ միանգամից, այլ իւրաքանչիւր տարի 5 միլիոն աւելացնելով իր կրթական բիւջէի վրայ։

* * «Journal des Economistes» ի վերջին համարում պ. Դ. Բելլէն (D. Belles) դեկուցանում է Միացեալ-Նահանգներում նորերս հաստատուած մի ձեռնարկութեան մասին, որի նպատակն է մասնակից անել բանւորներին գործարանական վարչութեանը և առաջացած արդիւնքի բաշխմանը։ Գործարանի տնօրէնին փոխարինում է գործարանի հինգ մասների գլխաւորներից բաղկացած մի մասնաժողով. (այդ նորութիւնը ներմուծուած է առևտրական գրքեր պատրաստող մի գործարանում)։ Այլ և կայ մի երկրորդական մասնաժողով, որին թողուած է ընդարձակ նախաձեռնութիւն. ի վերջոյ՝

«Բանւորների անհատական նախաձեռնութիւնը կատարելապէս զարգացնելու համար, գործարանի իւրաքանչիւր մասում (département) դրուած է մի մի մատեան, որոց մէջ ծառայողներին հրաւիրում են գրել այն գաղափարները կամ այն քննադատութիւնները, որոնք ծնեցնում են նրանց մտքում ներկայի սխալները, այլև այդ սխալները փոփոխելու նոր ծրագրներ։ Այդ ծրագրներից լաւագոյնները վարձատրւում են և 1895 ին այդ նպատակի համար ծախսուել է մօտ երեք հազար ֆրանք։ Իւրաքանչիւր վարձատրութեան արժանի հեղինակի. շնորհւում է մի վկայագիր (diplôme)։ Բացի գրանից, նրա անունը գրւում է մի տեսակ «պատւոյ աղիւսակի» վրայ, որ ընդ միշտ կախուած է գործարանի գլխաւոր շէնքի մի բնակի մասում։ Այդ ամենը շատ բարերար հետևանքներ ունի. նա մանաւանդ, որ ամերիկացին ի բնէ շատ հնարագէտ է։ Այլ և մրցանակաբաշխութիւնը կատարւում է մի հանդիսաւոր ժողովում, ուր գործարանի բարձրագոյն պաշտօնեաները մի շարք ճառեր են կարդում համախմբուած ծառայողներին։ Այդ վարմունքը քաջալերում է մարդոց աշխատելու ոչ այլ ևս մեքենայաբար, առանց իրանց հաշիւ տալու որևէ գործի վերաբերմամբ, այլ գիտելու, ուսումնասիրելու իրանց գործը, կարդալու, կրթուելու, միով բանիւ ընդլայնելու իրանց մտաւոր հորիզոնը»։

* * «Rewiew of Rewiews» հոկտեմբերի համարում տիկին Փրէնցիս Ուիլլարդ շատ հետաքրքրական մանրամասնութիւններ է հաղորդում ալքոհոլի և ծխախոտի գործածութեան դէմ կազմուած «կանանց համաշխարհային դաշնակցութեան (Ligue universelle des femmes) հիմնարկութեանց և ընդարձակ զարգացման վերաբերմամբ։ 1883-ին, տիկին Ուիլլարդի՝ Սան-Ֆրանցիսկոյի տարտառումները այցելելուց յետոյ էր, որ որոշուեցաւ այդ դաշնակցութեան իրականացումն։ Դաշնակցութեանը մասնակցող կանայք կրում են իրանց կրծքի վրայ մի սպիտակ ժապաւէն և իրօք անձնազոհութեան անհաւատալի ապացոյցներ են տալիս։ Նոքա ցրւում են իբրև առաքեալներ աշխարհիս ամեն կողմերը և շատափոյթ աշխատում են ամեն տեղ դաշնակցութեան ճիւղեր հիմնել։ Այդպիսի ճիւղեր շատ տեղ կան արդէն՝ Նորվեգիայում, Աւստրօ-Հունգարիայում, Հնդկաստանում, Իրլանդիայում, մինչև իսկ ճապոնիայում։ Այդ նախանձախնդիր կանանցից մի քանիսի շահած հետևանքները յիրաւի ապշեցուցիչ են։ Ի շնորհս դոցանից միկ՝ Մէրի Հընտի (Mary Hunt), դաշնակցութեան խնամքին յանձնուած դպրոցները յաճախող տասնուկից միլիոն երեխայք ուսանում են թէ որպիսի քայքայիչ ազդեցութիւն է գործում մարդկային կազմի մէջ ալքոհոլի և ծխախոտի գործածութիւնը։ Դաշնակցութեան նշանաբանն է՝ «Իմ ծուխը՝ ամբողջ աշխարհն է, իմ կրօնը՝ բարի գործել»։

* * «Scribners Magazine»-ի հոկտեմբերի համարում պ. Ջ. Լ. Ստեֆենս ուսումնասիրելով ամերիկական մեծ արդիւնագործութիւնները, խօսքը ի վերջոյ դարձնում է լրագրութեան, որ Ամերիկայում նըկատուած է բացառապէս իբրև զուտ առևտրական ձեռնարկութիւն։ Մասնաւորապէս հրատարակիչները հետզհետէ տեղի են տալիս վաճառականներին և հրատարակիչները իրանց ցաւում են իրանց այդ վիճակի վրայ։ Սակայն մի մեծ լրագրի ծախքերը իրօք առասպելական են։ Պ. Ստեֆենս հետևեալ կերպով է բաժանում այդ ծախքերը՝

«Խմբագրութեան ու գրականութեան ծախք 220,000 դոլլար *), ներքին լուրերի՝ 290,000 դոլլար, պատկերների՝ 180,000 դոլ. թղթակիցների՝ 125,000 դոլ. հեռագրների՝ 66,000 դոլ. ծովային հեռագրների՝ (cables) 27,000 դոլ. մեքենաների՝ 410,000 դոլլար թղթի 617,000 դոլ. խմբագրատան, լուսավորութեան, մելանի, և այլն՝ 219,000 դոլլար։ Ուրեմն ընդամենը տարեկան ծախքը հասնում է 2,053,500 դոլլար անհաւատալի գումարին, որ աւելի է քան հինգ միլիոն ռուբլի»։

*) Մի դոլլարը մօտ երկու և կէս ռուբլի է։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՒՍՏՐԻԱ.—Աւստրիական ռէյխսրատի մէջ տեղի են ունեցել հակա. 24 ին մեծ խռովութիւններ։ Ժամը

5½-ին գնդակ նիստը փախուստով գնացաց, մնացամասները սկսեցան պնդել, որ ժողովը պիտի գրացուի Հանգստոյ հետ ամենամեծաւար համաձայնութեամբ. Այդ տարօրէն ուժգուն տնձից. Առաջին խօսողն էր Լիւլեքոր, որին ձախակողմեան ընտրիչները սկսեցին խանդարել ազմուկներով. Ձէնէլբերը և Վօրֆը խօսք չընդունելով, ճառը սկսեցին խօսել և որոշեան ամեն ջանք ի գործ դնելով անշնար նստ կարգը վերահաստատել, փոխ-նախագահը նիստը գադարեցուցից. Ժամը 8½-ին նորից սկսած ժամանակ, սեղի ունեցաւ ազմկալից տեսարանները Ձենէլբերի և բրիստոնէական - ազգասիրականների միջև. Լիւլեքոր գոռաց. Ձենէլհանգիստները ոչ սէր չէ կարող գործել այսպիսի փոզրացին տգիտին հետ։ Ըզգոյշանալները ծափահարելին։ Հարկ եղաւ Ձենէլերի չորս կողմանկիցները զանել միւս կուսակցութիւններից՝ ճառախօսը պահպանելոյ որ նիստը շարունակուի դանդաղ, բայց փոխ-նախագահը չհամաձայնուեց և առաջարկեց Լիւլեքրին՝ շարունակելու ճառը։ Սկսնդալը շարունակուեց մինչև ժամը 11-ը. Մի քանի պատգամաւորներ ձախակողմից, միասին սկսում են երգել «Քաջալերս» բառը, իսկ Ձենէլերի կողմնակիցները դրան պատասխանեցին յիշդակութիւններով տարբեր գնդաձեւերի վրայ. Ձախակողմնականները սկսում են նորից ազազակել. Վօլֆը սեղանի մօտ ամրոցնս ինքնասպանում է, որ ժամը պատգամաւորները աշխատում են արգելել և սկսվում է մի խայտառակ կռիւ. բորբոք կորցում են գրքակալները և սէմնոց գլխի տալով, սկսում բուլթուխիս. Նիստը փակում է 179 ձայնի պահպանմամբ։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԲԱՐՈՒՐ ՌՈՍՏՈՄՆԵԱՆՑ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ Թ

ՈՒՄԵՑԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒՆԴՈՒԹԻՒՆ

Բ. ՆԱԻՐԱՊԵԹԵԱՆ

(Կայմա. Կօթզեցոյի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր, բայց միայնակի օրերից.

Ա Ռ Ա Ւ Ո Տ Ե Ա Ն Ը Ս

Բ. Ա. ՆԱԻՐԱՊԵԹԵԱՆ—11 ½ 12 ժ. փիրաթուբերկիան, վէներական (սիֆիլիս) և մէզասեռական հ.

Կ. Մ. ՀԱԿՈՒԹԵԱՆ—9 10 ժ. աչքի, ներքին և ներսային հ.

ԿԻՒ ՌԱՅԵՂ Ա. Ե. ՔՈՐԻՒՆԵԱՆ—10½—11½ ժ. կանանց և երեխայոց։

Զ. Ի. ԲԱՐԱԼԱՅԵԱՆ—11½—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ԳՐՕՏՅԵԱՆ—12—1 ժ. ականջի, կռկռոցի, քթի և կրծքի հ.

Ա. Յ. ԿՈՐՊԵՅԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ե. Ֆ. ԳՈՒՐԳԻՆ—1½—2½ ժ. ներքին և միզասեռական հ.

Ա Բ Ե Ղ Ա Ն Ե Ր Ը

Ա. Ա. ՔԱՐՊԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին երեխայոց հ.

Բ. Ա. ՆԱԻՐԱՊԵԹԵԱՆ—6—6½։

Ա. Ն. ՀԱՅՐԱՊԵՏԻԱՆ—6—7 ժ. ներսային (երեխայասութեանցների), վէներական և մաշկի հ.

Տ. Ի. ՐԱԽՆԱՆՑ հիւանդասենեակ քիմիական և ֆոտոգրաֆական հետազոտութիւն է անում մէզի, խոխ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համաձայնուելի (Կօնիաքի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բ. Ա. ՆԱԻՐԱՊԵԹԵԱՆ։

ՎԻՐԱԲԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Մշտական մահճակալների բաժնով

ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈՍՅԱՆԻ

(ՆԵՐՔԻՆ ԴԱՐՁԱԾ ՀՈՒՐՈՒՆՑՈՒՄ)

Ամէն օր, Կիրակի և տօնական օրերից բացի, ժամը 10—12 ընդունութիւն։

Ամէն օր, բացի կիրակի և տօնական օրերից, ժամը 10—12 ընդունութիւն։

Ամէն օր, բացի կիրակի և տօնական օրերից, ժամը 12½—2, վիրաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երեխաներ, չորեքշ., ուրբաթ և կիրակի օրերը)։

Ի. Ի. ՕՍՏՐՈՒՄՈՎԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծոցի պատուաստումն։

Մ. Ն. ԲԵՆԿԼԻՄՈՎԻՉ 12—1. ականջի, քթի, կռկռոցի և վիրաբուժական հիւանդութիւնց (երեքշ., հինգշ. և շաբաթ օրերը)։

Մ. Ռ ԳՐԻՆՑՅԵՐԻ 12½—1½, մասնաւ և բժշկական մարմնացուցիչներ, բժիշկների պրոֆեսոր (երկուշ. չորեքշ. ուրբաթ) մնաց փոխադրած համաձայնութեամբ։

Ի. Ե. ԱՒՏՈՒՄՈՎԻՆ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց։

Ֆ. Ս. ՔԱՉՈՒՐԻՆՑ ժամը 11—12, կռկռոցի, վէներական, սիֆիլիսի և մեզային օրգանների հիւանդութեանց հ. (երեքշ. հինգշ. և շաբաթ)։

Ն. Տ. ՄՈՒՐԼԻՆ, ժամը 12½—2, ականջի, կռկռոցի և քթի հիւանդութիւնների (երեքշ. չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ասամնաբուժ Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԻՆՆԵՐ, ժամը 11—12, ասամնաբուժութեան, նաև ասամնաբոյսեալ լցցնիու և արհեստական ասամնեաց դնելու։

Ա. Ն. ՏԷՆՑ, զեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիոլոգիական հետազոտութիւններ է կատարում — հետազոտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի և այլն։

Հիւանդները ցանկացողները պարտական են նախապէս յինուէ. Բանաւորները կան բաժանմունքներ՝ մասնաւոր պարանոց — մասնաւորի համար։

Բոլորդի համար վճարը, ինչպես նաև ծոցի պատուաստման համար, 1 ռուբլի է։

Ընդհանրի համար թէր է. Համախորհրդարանի. անդամահատութեան մասնաւոր, մյուսների համար, կնքոգրամներ, լույսարան և ընդհանրի համար տանձին համաձայնութեան պէտք է կատարեն։

ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԵՐԱԹՈՒՂԻ

Մարգամաթ № 1 գնացքը գալու է գալիս Թագուից գէպի Թիֆլիզ օրական 4 ժամից և 1 րոպ. Թիֆլիզից է հանուում առաւոտան 8 ժամ 30 րոպ. Գալու է գնում Թիֆլիզ՝ գէպի Բաքու առաւոտան 9 ժամ և 15 րոպ. Բաքում է հանուում երեկոյեան 8 ժամ և 48 րոպ.

Մարգամաթ № 9 գնացքը գալու է գալիս Թագուից գէպի Թիֆլիզ գիշերուայ 12 ժամ և 6 րոպ. Թիֆլիզ է հանուում երեկոյեան 7 ժամ և 10 րոպ. Գալու է գնում Թիֆլիզից գէպի Բաքու երեկոյեան 7 ժամ 55 րոպ. Բաքում է հանուում առաւոտան 8 ժամ 45 րոպ.

Մարգամաթ № 2 գնացքը գալու է գալիս Բաքուից գէպի Թիֆլիզ առաւոտան 7 ժամ 45 րոպ. Թիֆլիզ է հանուում երեկոյեան 8 ժամ 34 րոպ. Թիֆլիզից գէպի Բաքու է գալու գնում երեկոյեան 9 ժամ 34 րոպ. Բաքու է հանուում առաւոտ 1 ժամ 2 րոպ.։

Մարգամաթ № 4 գնացքը Բաքուից գալու է գալու գէպի Թիֆլիզ երեկոյեան 8 ժամ 35 րոպ. Թիֆլիզ է հանուում առաւոտան 9 ժամ 11 րոպ. Թիֆլիզից գալու է գալու գէպի Բաքու առաւոտան 11 ժամին և Բաքու է հանուում առաւոտան 6 ժամին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակն է և մինչև յունվար ամիսը լոյս կտեսնի
— Մ ի շ տ շ ք ը —
ՍԻՒՐԱՏԱՐՈՒՆ
ՔԻՒՍՏՈՒՆԿԱԿԱՆ ԿՐՕՆ
Ուղեցոյց հայ կրօնաւորների համար—Համար շորրորդ.
Ստանկ Քոհ. Ստանկեանց
(10—9)

ԲԺՇԿԱՊԵՏ
Ն. Զ. ԱՒՄՐԻԿԵԱՆՑ
նախկին բժիշկ Ս.-Պետերբուրգի և Լոնդոնաց Կայսերական պատուանաշանի, բնդունում է Նրեվանցոց մէջ Նոր Նախիջևանցոց հիւանդներին Նոր Նախիջևանցոց համար առաւոտեան 10—11 ժամը։ Դանդոնայա № 29, տուն իշխանների Քոլ ժանեոնցի։ (10—7)

5000
հին և նոր գործածուած պարսկական նամականոշով (марки) ի՛ւղարկէ Թիֆլիզ պատմանեցով և Նմուշներով. М. Шахназару, Баку. (5—2)

Շուտով լոյս կտեսնի
ՊՏՏԻ ՕՐԱՑՈՑ
(ՏՐՈՒՆԱՐՈՐ ՏՕՐԻ)
գինը փոխանակ 60-ի 50 ԿՈՊԵԿ։
Թիֆլիզ՝ Տպատպարանին Իշխ. ա. թ. Նղանեանցների։



Bateaux a vapeur Français „N. PAQUET ET Cie"

Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն

„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կրկին ՄԱՐՍԷԼԻԱՅ ՊՈՐՏՈՒՄ չորեքշաբթի օրերը, երբոր շարասք մի անդամ, սկիզբ յունվարի 29/10-ի չորեքշաբթիից. և

ԲՈՒԹՈՒՄԻ ՆԱԻՈՎ ՊՈՐՏՈՒՄ, ՍԱՒՈՒՄԸ ՄԻ Ա. ՕՐՈՒ ՀԱՐԱՎ

Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 12/24 նոյեմբերի ԸՆԴՀԱՆՈՒՐ շոգենաւը նաւասթան է ԲԱԹՈՒՄ.

և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երկի. 4 ժամին Բաթումից—Փոթրիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ, գինը տոմսրաքանչիւր պարաս է լիրան։

Ապրանքների և ճանապարհորդների մասին պէտք եղած տեղեկութիւններ տուեալու համար թող բաժնետէրն գիմել ընկերութեան գործակատարներին

Բաթում։—Վ. Ա. Ղազարեանին, Նախիջեւանում։
Թիֆլիզում։—Գ. Օ. Գ. Բարխուդարեանին. Մեծի փողոց, Նալբանդեան Ըղձուտ քարտնատուրայում։
Բագուում։—Գ. Ս. Դիլիջարեանին, Կօլբեզակինի Տրապարակ Ն. 5 Օ. Ս. Մելիքեան Հնձբ.-ին։ (20—8)

ԹԻՖԼԻՉԻ ՔՂՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Տրատարակում է իր գիտակցելի բնդունութեան, որ իւր առեանում. Նոյեմբերի 27 ին, գիշերուայ 12 ժամին Նշանակուած է ԾԱՌԱՅԻ ԹԻՖԼԻՍՈՒՄ, Քեռվի նախկին բարվառարայի տեղ բազարային տան կառուցանելու համար նեմբեր մասնակցութիւնս և աշխատանքներ կատարելու 22,364 ռ. 64 կ.,

Ընդհանրի տանձնելոյ ցանկացողները պայմաններ և նկարը կարող են տեսնել բազարային վարչութեան մէջ, չիհամիների բաժանմունքում ամենայն օր, 9 ժամից մինչև 1 ը. (4—1)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԵՒԱՕՐ“

Բարեբաղդն Նաւասարտած 1872 թուին Մոսկուայում

Թիֆլիզի գլխաւոր գործակատարութիւնն ընդունում է

ԿԵՆԱՑԻ ԶԳԱՀԱՑԴՐՈՒԹԻՒՆ

ԱՒՏՈ տեսակ անչարժ և շարժական կալքերի

ԿԵՆԱՑԻ ԵՒ ԻՐԵՆՑ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԶԳԱՀԱՑՈՒԹԻՒՆ

առանձին ձեռնասու պայմաններով, արտօնութիւններով, աշխատաւորի անընդհատ գտնելու գէպքում. պատճառաբանութեան ժամանակից են ընկերութեան օգուտները։

ԶԳԱՀԱՑՈՒԹԻՒՆ ԴԻՄԵԼՈՎ ԴԻՊՔԵՐԻՑ

Ծուխ, գետնոյ և ցամաքային ճանապարհներով. ապահովագրութիւն չունենալի և նաւերի։

Ընտրովագրութեան համար յայտարարութիւններն ընդունուում են և ամեն տեսակ տեղեկութիւններ և բայտարարութիւններ տպագրվում են ընկերութեան գլխաւոր գործակալ ԱԼԵՔՍԵՅԵՎ ԳՐԻԳՈՐԻՍԻ ՍԵՐԳԵՅԵՎԻ գրասենեակում. Երևանեան հրապարակի վրայ, տան իշխ. Ցիցիանովի, № 2.

ԲԱՖՖԻԷ

„ՍԸՄՄՈՒՆԻ“ ա. ք. և գ. գիրը

„ԴԵԼՒԻՒ-ԻՒՂԻՆ“ ա. ք. և գ. գիրքը վերջաբանով

ԵՒ

„ԿԱՆՑՆԵՐԻՆ“ երկրորդ լիահատոր Հատորը

ԲՆԱԿՈՒՄ ԳԵՂԱՐՎԵՍՏԸ

հարմանակվում է մինչեւ «ՍԸՄՄՈՒՆԻ» լոյս տեսնելը.

Ամեն մի գրքի գինն է 2 ռ. 50 կ.

Երեքի գինը միասին. 6 ռ. —

«ՍԸՄՄՈՒՆԻ» ժամուի տակն է և լոյս կտեսնի յունվար ամսին.

Մամուլի տակն է և շուտով լոյս կտեսնի «ՈՍԿՈ ԴԵՐԲԵՂ»-ը արժէ

70 ԿՈՊԵԿ

Ձանկացողները կարող են գիմել իրէ բաժանորդագրութեան և իրէ Բաֆֆիի վաճառելի երկերի համար. Թուխարում՝ Тифлисъ, Аршаку Раффи. Въ книжномъ магазинѣ М-m Raffi, 270, Uxbridge Raod, Shepherd's Bnsh London W. (15—3)

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՂԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՑ և ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ «ԿԱՆՑՆԵՐԻՆՑ» ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐ.

1) Հաֆիզեան, Գնացքի գոյզ. գերմ. Քարգմ. Տիրտ. հի Ներսեսեանց, Թիֆ. լիզ. 1897, գինն է. . . . . — 10
2) » » Զինուոր Ծպեր. գերմ. Ք. Տ. Ներսեսեան. . . . . — 7
3) Վ. Լ. Ալեքսիէֆ, Նրկրի և երկրի մասին, առս. Ք. Գ. Գ. 14 նկարներով. . — 10
4) Ե. Ի. Սաֆո, Զուլֆի, 1897. . . . . — 50
5) Սուրգուխաց Գ. Ամերիկեան, բ. տպ. Թիֆլիզ. 1897 թ. . . . . 1 —
6) Ղ. քան. Մկրտումեանցի, Տանիկ փոշան, Մոսկուա 1896 թ. . . . . — 15
Նան նոյն տպագ վաճառուած են յիշատակ գրքերը
7) Ռ. Գաստանեան Ընտիր երգասքերութիւններ. Պետերբուրգ, 1893 թ. երկու հատոր գինն է. . . . . 4 —
8) Գիւտ քան. Գրանեանի, Լուսաց-գրական Տանկոս, բ. տարի. ա. և բ. գիրք. Թիֆլիզ, 1897 թ. . . . . 3 —
9) Ոչ. Երիցեանի, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Գևմական Հայք XIX իզ դարում, մասն ա. և բ. Թիֆլիզ, 1894 թ. գինն է. . 4 —
10) Ռ. Գալստեանի, Գլխկիա, Պետերբուրգ, 1894, գինն է. 1 25
12) Ռ. Ղանդաղեանի, Ամենայնի Նամակներ, Մոսկուա, 1897 թ. . . . 1 50
12) Մես. արքեպ. Մարսեանի. Տեղեկագիր Պետերբուրգի. Վաղ. 1896 թ.. 2 —
13) Գ. ք. Երիցեանի, Ռուսահ Հայաստանի, Տ. ա. չորս. տպ. Մ. 1895. 1 50
14) Գաստանեանի Ընտիր վարդապետ Գաւրիէլեցոյ, գ. տպ. Վաղ. 1896. 2 —
15) Շիրվանզադէ, Ըրսէն Իշխանեան, վէպ. Թիֆլիզ, 1888 թ. 1 50
16) Ռ. Հայկազեան, Բագրեանց—Զաւակաց գատաս. Վաղարշ. 1894 թ. . . 1 50

Նշած տեղը առաքուել է բաժանորդների համար
ի օգուտ տուժած Թուրքիոյ Հայոց. (5—2)

ՄԱՆՈՒԿԵՑԻ ԵՒ ԹԻՒՐՔԻՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ

տասցուած է վաճառելու համար, բարեգործական նպատակով յոյս ընծայած գրամական միանական ժողովածոյ

„БРАТСКАЯ ПОМОЩЬ

ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ“

(ВЪ ПОЛЬЗУ ПОСТРАДАВШИХЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНЪ)

Состоитъ изъ 950 разныхъ разсказовъ, повѣстей, стихотвореній, романсовъ, пѣсенъ, драмъ, комедій и водевилей, написанныхъ 44 армянскими писателями. Кромѣ того, въ сборникъ помѣщены 150 портретовъ писателей, 36 видовъ, 5 картъ и 5 планъ.

Сборникъ состоитъ изъ 3 большихъ томовъ, общимъ объемомъ въ 2,000 страницъ, и продается по подписной цѣнѣ 5 рублей.

Подписка принимается въ Тифлисѣ, въ книжномъ магазинѣ Н. Н. Соколова, на Головинскомъ проспектѣ, противъ Александровскаго сада.

Иногородные адресуютъ свои требованія: Тифлисъ, Головинскій проспектъ, домъ Соколова.

Цѣна сборника съ пересылкой 6 рублей.

Въ Тифлисѣ сборникъ можно получить безплатно.

Редакторъ-издатель Ованесъ Туманянъ.

ԱՄԵՆԱՀԱՐՍՏԻՐ ԱՂ

ԿԱՂԱՑԱՑ ԱՂԱՀԱՆԵՑԻՑ

Յատկապէս ՍՆԴԱՆԱՑ և ԿԵՐԱԿՈՒՐ համար պատրաստած

ԵՐԻՒԱՆՑԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ

ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ԸՆԴՈՒՐԿՈՒՄ

Վաճառվում է Թիֆլիզի առաջնակարգ թղթավաճառների խանութներում։

№ 1. ՍՆԴԱՑԻ ՀԱՄԱՐ

Կէմ փունտանոց փաթեթը	5 կ.
Մէկ փունտանոց »	8 կ.
5ՄՈԸ փունտանոց բաղկ.	75 կ.

№ 2. ԿԵՐԿՈՒՐ ՀԱՄԱՐ

Մէկ փունտանոց փաթեթը	6 կ.
5ՄՈԸ փունտանոց բաղկ.	30 կ.

Մեծ քանակութեամբ գնողների համար առանձին զիջումն է լինում։

Առաջնակարգ հիւանդները եւ ուշադիր առանորդները, որոնք կամենում են պատուել իրանց հիւրերին, պէտք է անպատճառ տեղան իրանց ունենան այս բնաւր և ձրիկի պէս ապրանք առը, որ պատրաստում է Կորպոյ Տանքի ամենաընտիր և տաղանդաւոր կրտուած ապրիչ։

Ծախքապարագիրը կարող են գիմել Թիֆլիզ այս հասցէով (50—48) Ереванду П. Манденову.

ԼՈՒՍԱՒ ՏԵՍԻԼ

Ս. ԷՄՄԻՆՑԻՆ

ՓԱՌԱԿԱՉԱՓ ԵՒ ՊԱՏԿԵՐԱՉԱՐԴ

ՕՐԱՑՈՑՑ 1898 Թ.

Վերափոխ Կաթողիկոսի ս. Էջմիածնի, Գէորգեան Ճեմարանի եւ այլ պատկերներով զարդարուած. այլ եւ ութիւր հարուստ նկարագրական եւ վիճակագրական տեղեկութիւններով։

Վաճառվում է վիճակային կանխատրանների եւ հոգեւոր կառավարիչներում. Բաւ. Ս. Էջմիածնի Կանցարանին, իսկ Բաւ. Գէորգ Քաֆֆի գրամագանատերերում։ Մեծ քանակութեամբ գնողին 20% զիջումն կը լինի, պէտք է դիմել ս. Էջմիածնի տպարանական հոգեւոր այս հաստիտ։ (10—7)

Дозволено цензурою. Тифлисъ 11-го Ноября 1897 года.

Տպարան Մնացեան Մարտիրոսեանցի։

Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81.